ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ

մարտի 17, 2020թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
Առաջադրանքի անվանումը՝ Ծրագրի համակարգողի օգնական (խորհրդատու)
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **AIC-08**
Վերջնաժամկետ՝ 2020թ. մարտի 31-ը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Անհատ խորհրդատուի աշխատանքային պարտականությունները ներառում են.

- Ծրագրի շրջանակներում կնքված խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրերի կատարման ընթացքի հետևում և դրանից բխող միջոցառումների իրականացում,
- Ծրագրի շրջանակներում կնքված շինարարական պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ժամանակացույցերի ընթացքի հետևում, անհրաժեշտության դեպքում դրանց վերանայման վերաբերյալ կապալառու կազմակերպությանը տեղեկացում,
- Աջակցի իրավաբանին և գնումների մասնագետին Ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերի փոփոխման նախագծերի մշակման հարցերում,
- Ծրագրին առնչվող մուտքային և ելքային նամակների պատշաճ ժամկետի կատարման ընթացքի հետևում,
- Ծրագրին առնչվող փաստաթղթերի թարգմանություն հայերենից անգլերեն և հակառակը,
- Հանդիպումների արձանագրությունների փաստաթղթագրում,
- Ծրագրի հանրայնացման գործողությունների կազմակերպում ու իրականացում,
- Աջակցի ծրագրի համակարգողին՝ ամենօրյա աշխատանքների իրականացման գործընթացում:

Կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրի գործունեության ժամկետը կսահմանվի 1 տարի՝ երկարաձգման հնարավորությամբ:

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

- *Բարձրագույն իրավաբանական կամ տնտեսագիտական կրթություն,*
- *Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն,*
- *Համակարգչային գիտելիքներ (MS OFFICE, MS Project)*

Հետաքրքրված խորհրդատուն պետք է ներկայացնի տվյալներ իր կրթության և աշխատանքային փորձի վերաբերյալ (CV): Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Զարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Անհատ Խորհրդատուի ընտրության» ընթացակարգին համաձայն:
Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:
Ինքնակենսագրականները պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ procurement@atdf.am և atdf@atdf.am հասցեներով, ոչ ուշ քան **2020թ. մարտի 31-ը, ժամը 17:00**: Միայն կարճ ցուցակում ընդգրկված անձիք կհրավիրվեն հարցազրույցի:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60: